ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

CHAIRMAN OF THE CENTRAL ELECTORAL COMMISSION
OF THE REPUBLIC OF ARMENIA

N 01/11/318
«24» 09 2024թ.

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ
/Երևան, Արաբկիր, Հր. Քոչարի փ., 16, 18
zeynalyanartak@gmail.com/

Հարգելի պարոն Զեյնալյան

Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հասցեագրած Ձեր 20.09.2024թ. հ.1260710 էլեկտրոնային դիմումով խնդրել եք «ապահովել՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի նախագծին ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում քաղաքացիների միանալու սահմանադրական իրավունքը»՝ վկայակոչելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 16-րդ մասը՝ համաձայն որի. «Տեղում ստորագրությունների հավաքումն իրականացնում է նախաձեռնող խմբի ներկայացուցիչը՝ համապատասխան հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ, ինչպես նաև իրականացնում են նոտարները՝ նոտարական գրասենյակներում:»: Օրենքի 13-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված է՝ «Տեղում ստորագրությունների հավաքմանը կարելի է միանալ նոտարական կարգով տրված հայտարարությամբ, որի ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

Վերը նշված իրավանորմերով օրենսդիրը, որպես ստորագրություններ հավաքելու իրականացման միջոց, սահմանում է «ստորագրությունների հավաքման

ՀՀ, ք. Երևան, 0009, Գ. Քոչարի 21ա, հեռ. +374 (10) 54 35 23
21ª, G. Kochar Str., 0009, Yerevan, Armenia, tel.: +374(10) 54 35 23
Էլ. փոստ/E-mail: cec@elections.am

ձևաթերթիկը», որը լրացվում է տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև «նոտարական կարգով տրված հայտարարությունը», սահմանելով, որ «նոտարական կարգով տրված հայտարարությամբ» տեղում ստորագրությունների հավաքումն իրականացնում են նոտարները՝ նոտարական գրասենյակներում: Հետևապես, տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային եղանակով ստորագրահավաքին միանալուց բացի, որևէ այլ կերպ, քան նոտարական գրասենյակում նոտարին նոտարական կարգով տրված հայտարարությամբ, տեղում ստորագրահավաքին միանալու եղանակ օրենքով նախատեսված չէ:

Օրենքի 13-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն.

«15. Տեղում ստորագրությունների հավաքում կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝

1) համայնքապետարաններում.

2) բազմաբնակավայր համայնքներում՝ նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում.

3) Երևան քաղաքում՝ վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում.

4) մարզպետարաններում:»:

Վերոնշյալ իրավանորմով օրենսդիրը հստակ սահմանել է այն վայրերի սպառիչ ցանկը, որտեղ կարող է կազմակերպվել ստորագրությունների հավաքումը:

Հարգանքով՝

Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ